ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՏԻԿՆԱՅՔ և ՊԱՐՈՆԱՅՔ,

Թույլ տվեք հակիրճ ներկայացնել մեր ձեռնարկությ
նպատակները: 2014թ.-ի մարտի 18-ին Բեռլինի Շառլոտտենբուրգ շրջանի Առաջին Ատյանի դատարանը մեր ձեռնարկության հիմնադիր պայմանագիրը **HRB 157103 B** համարի տակ գրանցեց առևտրի ռեգիստրում: Մեր կազմակերպության անունն է "EAE- European and Armenian Experts GmbH" (ՀԵՄ- Եվրոպացի և Հայ Մասնագետների ՍՊԸ): Այն ունի իր տարբերանիշն ու պրոֆիլը:

Մեր ընկերության առարկան մասնագետների տվյալների բանկ ստեղծելն է և դրա հետ կապված առևտրի, արդյունաբերության և սպասարկման ոլորտներում տարբեր բնույթի ծրագրերի և աշխատատեղերի միջնորդավորումն է հատկապես եվրոպական և հայկական տարածաշրջաններում (ներառյալ Լեռնային Ղարաբաղը):

Առարկայի թվին են պատկանում նաև կրթատեղերի միջնորդավորումը, ուղղորդումն ու նրանց փոխանակումը, ինչպես նաեւ աշխատանք որոնողների և գործատերերի միջև կապի հաստատումը եվրոպական երկրների, Ռուսաստանի և ՀՀ-ի միջեւ (ներառյալ Լեռնային Ղարաբաղը) համապարփակ և բազմալեզու տվյալների բազայի օգնությամբ, որը ինտերնետային կայքի միջոցով պետք է վերոնշյալ նախագծերի և աշխատատեղերի զետեղման, ներկայացման և ուղղորդման համար ունենա համապատասխան որոնողական, տեղեկատվական, բնութագրող և վաճառելու հնարավորություններ:

Բացի վերը թվարկվածից հատկապես առևտրի, արդյունաբերության և սպասարկման ոլորտներում իրականացնում է տարբեր բնույթի սեփական ծրագրերի նախագծում, տնօրինում, իրականացում և վերջիններիս վաճառքի կազմակերպում:

Նպատակների իրագործումը նախադրում է Գերմանիայում, Ռուսաստանում, եվրոպական այլ երկրներում, ՀՀ-ում և ԼՂ-ում տարբեր բնագավառների մասնագետներին հավաքագրելու, նրանց գիտելիքներն ու կարողությունները միավորելու, ինչպես նաև ստեղծելու միմյանց միջև փոխհաղորդակցման հարթակ մասնագիտական ներուժի արդյունավետ օգտագործման համար՝ այն ի նպաստ դնելով ինչպես Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի, այնպես էլ եվրոպական երկրների զարգացմանը:

Մասնագետների այս միավորումից բխում են միջոլորտային ծրագրեր, որոնք կարող են ներդրվել ինչպես ՀՀ-ում և ԼՂՀ-ում, այնպես էլ եվրոպահայ համայնքներում: Վերոհիշյալ միջառարկայական կապը բարձրացնում է մասնագետների համագործակցության որակը և բազմապատկում առկա ներուժի արդյունավետ օգտագործումը: Միևնույն ժամանակ այն յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռնում սեփական ունակություններն ու գիտելիքները հնարավորինս ներդնելու մշակույթի, կրթության, գիտության, տնտեսության և ընհանրապես հանրության զարգացման գործում և ծրագրային կամուրջ կառուցում Գերմանիայի, ՌԴ-ի, եվրոպական այլ երկրների, ՀՀ-ի և ԼՂ-ի միջև:

Հարգանքներով՝

.

Միքայել Մինասյան
EAE- European and Armenian Experts GmbH-ի գործադիր տնօրեն